ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
02.04.2026 թվականին կնքված N ԵԿԱ-ԳՀԱՊՁԲ-26/17 գնման պայմանագրի

ք. Երևան

«25» «05» 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Տեր-Թովմասյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷՆՋԻԷՍ Քոմերս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Զ. Նաղաշյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 02.04.2026թ. կնքված N ԵԿԱ-ԳՀԱՊՁԲ-26/01 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, «ԷՆՋԻԷՍ Քոմերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ձայնասփոման համակարգի մատակարարման, տեղադրման, կարգաբերման և գործարկման աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգման վերաբերյալ գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսված ձայնասփռման համակարգի մատակարարման, տեղադրման, կարգաբերման և գործարկման աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել 15օրով:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը կցվում է սույն համաձայնագրին և հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ	«ԷՆՋԻԷՍ Քոմերս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 20	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ., 11շ., բն.՝ 19
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500 352711227	Հ/Հ՝ 1570054660630100
ՀՎՀՀ՝ 00804091	ՀՎՀՀ՝ 00203685
Տնօրեն՝ Ա. Տեր-Թովմասյան	Տնօրեն՝ Զ. Նաղաշյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ